

Հավելված Հայաստանի
Հանրապետության
Վայոց Ձոր մարզի Վայք
համայնքի ավագանու
2022թվականի մայիսի 18-ի N
..... որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔԻ ՀԱՄԱՅՆՔ



ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ԾՐԱԳԻՐ

(2022-2026թթ.)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ
2022-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

Ծ Ր Ա Գ Ի Ր

Կազմել է համայնքի ղեկավար՝

/Մ.Մաթևոսյան/

Հաստատվել է համայնքի ավագանու
2022 թվականի մայիսի 18-ի թիվ
.....-Ն որոշմամբ

ԲՈՎԱՆ ԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Contents

1. ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ	4
2. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ	6
2.1. Համայնքի ընդհանուր նկարագրություն	6
3. ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ	13
4. ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԸ	18
5. ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ	20
Վայք համայնքի եկամուտների և ծախսերի դինամիկան 2021-2022թթ.	21
6. ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐ ԵՎ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	22
6.1 Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՍ) վերլուծություն	25
7. ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ	27
7.1 Համայնքի զարգացման տեսլական	27
8. Համայնքի զարգացման ծրագրերի, նպատակների առաջադրում և կոնկրետ խնդիրների ձևակերպում	28
9. ՀԶԾ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ	34
10. ՀԶԾ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ	35

Նախաբան

Ծրագրի նախագիծի հիմք է հանդիսացել Արմավիրի Արտադրական Նախնական Ծրագիրը ինչպես նաև սկսական մարզային ստորմուշքային ազնվագրական նշանակության այլ ծրագրեր

Վերնշյալ ծրագրերը նախատեսվում է իրականացնել՝ օգտագործելով համայնքի ուժեղ կողմերը, համայնքային բյուջեի միջոցները, ինչպես նաև ՀՀ Կառավարության և միջազգային այլ դոնոր կազմակերպությունների գործունե աջակցությունը:

Հանյիքնայեմ հանաորձևցում է միջաբքսեություն սեղևկան և միջաբքային ծրագրերի հետ նախատեսված հնարավոր նախընտրելի հանաորձևցում շքևկաները և ներգրավել նոր ծրագրեր մանավրապես այեմ հանյիքը հանաորձևցում կիրականացնում է ծրագրեր ելի ու պիտիտիտի Անակկան գրգրցանահմադրաի «Դևերիս» ԲՀ «Անրըկպիքիմ» ՀԿ ԱԿԻ կյուն հանյիքերի գրգրցանահմադրաի «Դևանակեա» ՀԿ ՀԲԵՄ Հյասունյան գրանցակի հետ

2. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2.1. Համայնքի ընդհանուր նկարագրություն

ք. Վայք (1956-1990 թվականներին՝ Ազիզբեկով), քաղաք Վայոց Ձորի մարզում, Երևանից 137 կմ հարավ-արևելք՝ Արփա գետի ափին: Վայք է վերանվանվել 1990 թվականի նոյեմբերի 23-ին: Եղեգնաձոր քաղաքից գտնվում է 20 կմ, իսկ Երևան քաղաքից 140 կմ հեռավորության վրա և հանդիսանում է Երևան-Գորիս-Արցախ ճանապարհի հանգույց: Տարածքը հյուսիսից, հյուսիս-արևմուտքից շրջապատված է Եղեգիսի, իսկ հարավից Վայոց ձորի լեռնաշղթաների ճյուղավորությունների խիստ կտրտված և թեթև լանջերով, միայն հյուսիս-արևմտյան մասում Եղեգիսի լեռնաշղթայի հարավային ճյուղավորությունների վրա հանդիպում են համեմատաբար հարթեցված հեղեղատարով քիչ կտրտված տեղամասեր: Վայքի տարածքով հոսում է Արփա գետը: Գարնանային վարարումները միջին հոսանքում սկսվում են մարտ ամսվա կեսերից, բարձրակետին հասնում են ապրիլին կամ մայիսին, գետի հաստատուն մակարդակը նկատվում է հուլիսի կեսերին: Վարարումները տևում են 90-120 օր: Գետը սնվում է անձրևաջրերով և ձնհալի ջրերով: Գետի վտակները հեղեղաբեր են: Ձմռանը գետը ափային մասում սառցակալում է: Վայքի տարածքի հողային ծածկույթը խիստ աղքատիկ է: Տնտեսությունների թիվը՝ 1870:

Ազատեկ

Բնակավայրի կենտրոնի հեռավորությունը մարզկենտրոնից՝ 24 կմ, Վայքից 7 կմ,

Բնակավայրի կենտրոնի բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1625 մ,

Բնակավայրը ընդգրկված է Վայք համայնքի կազմում: Ազատեկ անունը ծագել է նախկին Ազատ գյուղի անվանումից: Հետագայում 1828 թվականին Խոյից ու Սալմաստից գաղթած հայերը հիմնում են Ազատեկ գյուղը: Տնտեսությունների թիվը 176

Գյուղատնտեսական գործունեության հիմնական ուղղություններն են՝

- անասնապահությունը, - դաշտավարությունը և այգեգործություն, Գյուղատնտեսությամբ զբաղվում է 160 գյուղացիական տնտեսություն: Անասնազլխաքանակը 2016թ. հունվարի 1-ի դրությամբ կազմում է. - խոշոր եղջերավոր անասուններ՝ 542 գլուխ, - մանր եղջերավոր անասուններ՝ 596 գլուխ, - խոզեր՝ 20 գլուխ, - մեղվաընտանիքներ՝ 392: - թռչուններ՝ 1058:

Հողային և այլ բնական ռեսուրսներ

Հողեր (ընդամենը)՝ 6685,91 հա, այդ թվում՝

- Գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 6542.58 հա, որից՝

- վարելահող՝ 785.09 հա, բազմամյա տնկարկ՝ 76.63 հա, արոտ՝ 2577.96 հա, խոտհարք՝ 61.90 հա, այլ հողատեսք՝ 3041.00 հա ,

- բնակավայրերի հողեր՝ 96.78 հա,

- արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր՝ 20.24 հա

- էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր՝ 4.80 հա

- հատուկ պահպանվող տարածքների հողեր՝ 6.62 հա,

- ջրային հողեր՝ 14.89 հա

Փոռ

Արփա գետի ձախ կողմում, Վայքի լեռների հյուսիսային փեշերին, մարզկենտրոնից՝ 27 կմ հարավ-արևելք:

Այն վերաբնակեցվել է 1928 թվականին: Գյուղը շրջապատված է վեհ ու հիասքանչ լեռնաշղթաներով, որոնք հարուստ են ֆլորայով և ֆաունայով: Ազգաբնակչությունը հիմնական զբաղվում է հողագործությամբ, այգեգործությամբ, անասնապահությամբ ու մեղվաբուծությամբ: Տնտեսությունների թիվը 33

Արին,

գյուղ Հայաստանի Վայոց Ձորի մարզում, մարզկենտրոնից՝ Եղեգնաձորից, 22 կմ հարավ-արևելք: Արին գյուղը ծովի մակերևույթից 1630 մ բարձրության վրա է գտնվում: Համայնքը հյուսիս-արևելքից սահմանակից է Հերիեր, հյուսիս արևմուտքից՝ Մալիշկա, հարավից՝ Տնտեսությունների թիվը 70

Տնտեսությունը - Բնակչությունը զբաղվում է դաշտավարությամբ, անասնապահությամբ, մեղվապահությամբ ըայգեգործությամբ: Ցորենը հիմնականում լինում է աշնանացան, իսկ գարին՝ գարնանացան: Գյուղն ունի 73 տնտեսություն: Համայնքի տարածությունը 6056,31 հեկտար է, բնակելի տարածքը՝ 34 հեկտար: Գյուղում գործում են՝ դպրոց, ակումբ, բուժկետ: Համայնքը սնվում է գազի և էլեկտրական սնուցման կենտրոնական ցանցից: Համայնքն ունի խմելու ջրի 1 ինքնահոս ձջրաղբյուր՝ 8-վ/վրկ. ելքով:

գյուղ Ձեղեա

Գյուղը 1988 թվականի նոյեմբեր ամսից վերաբնակեցվել է Նախիջևանի շրջանի Ազնաբերդ գյուղից արտագաղթած հայերով: Գյուղը գտնվում է մարզկենտրոնից 20 կմ հյուսիս արևելք: Այս գյուղում իրենց հանգրվանն են գտել Նախիջևանից տեղահանված հայերը: Տնտեսությունների թիվը 28:

Բարձրունի

Բնակչության թիվը՝ 410 Բնակավայրը գտնվում է Վայոց ձորի մարզի Վայքի տարածաշրջանում: Այն մարզկենտրոնից հեռու է 45 կմ, Երևանի՝ 220 կմ: Գյուղը սահմանամերձ բնակավայր է, Վայքի տարածաշրջանից հեռու է 28 կմ, գտնվում է ծովի մակարդակից 1950 մ 2050 մ բարձրության վրա: Կլիման ձմռանը ցրտաշունչ է, ամռանը՝ զով: Տարեկան տեղումների քանակը կազմում է 350-400 մմ: Բնական լանդշաֆտները կիսաանապատներ են և չոր տափաստաններ, որոնց մի մասը վերամշակվել են՝ վերածվել կուլտուր- ոռոգելի լանդշաֆտների: Գյուղը հիմնադրվել է 19-րդ դարի սկզբներին, այն վերաբնակեցվել է 1928 թվականին՝ Արեմոյան Հայաստանի Խոյ, Սալմաստ գավառներից ներգաղթված հայերով: Գյուղի կենսագործունեության գլխավոր ճյուղը գյուղատնտեսությունն է: Կլիման նպաստավոր է այգեգործության, հացահատիկային, կերային մշակաբույսերի աճեցման համար: Մարդիկ զբաղվում են անասնապահությամբ ու մեղվաբուծությամբ: Պահուստային հողերը չեն օգտագործվում սահմանամերձ լինելու պատճառով:

Խնձորուտ

Բնակչության թիվը՝ 512 Բնակավայրը գտնվում է ՀՀ Վայոց ձորի մարզի հարավ-արևմտյան հատվածում, սահմանակից է մարզի Նոր Ազնաբերդ, Մարտիրոս, Գնիշիկ գյուղերին և Նախիջևանի Հանրապետությանը: Գյուղը հիմնադրվել է 1827 թ. ռուս-պարսկական Գյուլիստանի պայմանագրի համաձայն՝ Պարսկաստանից հայ ազգաբնակչության ներգաղթի արդյունքում: Չնայած բնակլիմայական անբարենպաստ պայմաններին (սակավաջուր, չոր կիսատափաստանային հողերի) գյուղն աստիճանաբար զարգանում է և ապահովում բնակչության աճ: Մինչև խորհրդային կարգերի հաստատումը գյուղը պատկանել է Նախիջևանի նահանգի Շարուր Դարալագյազ գավառին: Խնձորուտը հարևան գյուղերից կտրված շուրջ 20 կմ-ով և թշնամու (Նախիջևանի) դեմ հանդիման ունի շուրջ 25 կմ սահման: Բնակչության հիմնական զբաղվածությունը եղել է անասնապահությունը և հողագործությունը: Գյուղն ունի դպրոց, բուժկետ:

Մարտիրոս

Բնակչության թիվը՝ 610 Մարտիրոսը մեկն է Վայոց ձորի, ինչպես նաև ողջ Հայաստանի այն սակավաթիվ գյուղերից, որի հիմնադրման ստույգ տարեթիվը և հիմնադրողների անունները պահպանվել են: Այդ կարևոր տեղեկությունը արձանագրված է գյուղամիջի մեծ աղբյուրի մոտ 1283թ. վարդագույն գրանիտից կանգնեցված երեք մետրից ավելի բարձրություն ունեցող գեղաքանդակ խաչքարի վրա՝ ներքևում հետևյալ արձանագրությամբ. <>: Փաստերը վկայում են, որ Մարտիրոսը Պոռշ իշխանի հրամանով կառուցվել է ոչ թե ամայի վայրում, այլ վերակառուցվել է մի գյուղ, որը ունեցել է իր բնակիչները: Մարտիրոսը, իր ավելի քան 700 տարվա պամության ընթացքում, թողել է բազմաթիվ պատմական ու մշակութային արժեքներ: Մարտիրոսի ամենանշանավոր ճարտարապետական հնությունը 13-րդ դարի վիմափոր Սուրբ Աստվածածին վանքն է, որը գտնվում է գյուղից 2,5 կմ հարավ-արևելք, Նզար սարի ստորին հատվածում, որտեղից սկիզբ են առնում սառնորակ աղբյուրները: Վանքն ամբողջությամբ կերտված է Նզար սարի ներսում, ստորգետնյա լեռան մեջ: Ըստ պահպանված արձանագրությունների, վանքը 1286 թվականին կառուցել է Մարտիրոս Վարդապետը, իսկ ճարտարապետն է եղել քարագործ Գրիգորիկը: Վիմափոր եկեղեցին Գեղարդից հետո ամենանշանավոր և խոշոր ժայռափոր ճարտարապետական համալիրն է Հայաստանում, իսկ ներքին հնչեղությամբ այն առաջինն է հայ եկեղեցական շինարարության մեջ՝ իր կառուցողական բարձր արվեստով: Սահմանակից բնակավայրերն են՝ հյուսիս-արևելքից՝ Զառիթափը, հարավարևմուտքից՝ Սերսը, Խնձորուտը, հարավ-արևելքից սահմանակից է Նախիջևանի հանրապետությանը: Հեռավորությունը մարզկենտրոնից 33կմ, Վայք քաղաքից 20կմ, մայրաքաղաքից՝ 155կմ: Գյուղի տարածքը բաժանված է երկու ենթագոտիների՝ չոր լեռնատափաստանային և բարձր լեռնատափաստանային: Կլիման մեղմ է, զով ամառներով և ցուրտ ձմեռներով: Համայնքի տարածքը կտրտված է բազմաթիվ ձորերի և ձորակների խիտ ցանցով: Միջին տարեկան ջերմաստիճանը կազմում է՝ ամենաբարձրը՝ +37օC, ամենացածրը՝ -31օC, տեղումների տարեկան քանակը՝ 556մմ, ձյունածածկ օրերի թիվը՝ 124 օր: Համայնքի բնակչությունը հիմնականում զբաղվում է գյուղատնտեսությամբ և անասնապահությամբ: Համայնքն ունի մշակույթի տուն, գրադարան, փոստի բաժանմունք, բուժկետ, դպրոց և կապի բաժանմունք:

Սերս

Բնակչության թիվը՝ 214 Սերս գյուղը << Վայոց ձորի մարզի բարձր լեռնային և սահմանմերձ բնակավայրերից է: Սերսն ունի հին ու վաղեմի պատմություն: Հիմնադրման տարեթիվն անհայտ է: Հայտնի է , որ գյուղը պատկանելիս է եղել պատմական Հայաստանի Սյունիք նահանգին: Պահպանվում է գյուղի եկեղեցին, որի հիմնադրման տարեթիվը նույնպես անհայտ է: Սակայն հայտնի է, որ եկեղեցին վերանորոգվել է 1525 թվականին: Գյուղի բնակիչները 1604 թվականին գաղթվել են Շահ Աբասի կողմից: Գյուղը վերաբնակեցվել է 1828 թվականին, պապերը Պատմական Հայաստանի Սալմաստ գավառի Սաֆրա գյուղից գաղթած հայ ընտանիքներով: Սերսը, լինելով սահմանամերձ գյուղ, 1988-1994 թվականներին նորից հայտնվել է պատերազմական իրավիճակում՝, սակայն իր բնակիչների վճռականության շնորհիվ դարձել է անխոցելի մի ամրոց: Համայնքի բնակչությունը հիմնականում զբաղվում է անասնապահությամբ և հողագործությամբ: Համայնքն ունի դպրոց, բուժկետ և կենցաղսպասարկման այլ կառույցներ:

Գումբ

Բնակչության թիվը՝ 241 Վայոց ձորի շատ հին շեներից է Գոմքը: Այն գրով հիշատակված է Ստեփանոս Օրբելյանի <> մեծարժեք երկում: Մեծանուն պատմիչը պարզել է, որ Գոմք գյուղը վեց չափ հարկ է տվել Տաթևի վանքին, ինչն էլ նշանակում է, որ շենը եղել է ոչ շատ մեծ: Գյուղն այդպես էլ հիշատակված է՝ <> և հիմնագուրկ է այն ենթադրությունը, թե դա հին Գոմեր գյուղն է: Շենը եղել է ոչ շատ մեծ, սակայն աչքի է ընկել իր մի հրաշալի զարդով, որը մեր բազմադարյան ճարտարապետության եզակի նմուշներից է: Դա որմնափակ խաչքար-մատուռն է՝ իր կառուցվածքով, մտահաղացմամբ, քանդակներով և վիմագիր հիշատակարաններով մի անգնհատելի կոթող: Ըստ պահպանված արձանագրության՝ Խաչքար- մատուռը կառուցվել է 1263 թվականին: Գյուղամիջում գտնվում է եկեղեցու ավերակներ, որն իր ոճով ավելի շատ նման է 16-17-րդ դարերի ճարտարապետական աշխատանքներին: 1989թ-ին լքված գյուղ են եկել Սումգայիթից, Բաքվից, Կիրովաբաթից և այլ վայրերից մազապուրծ փախած առաջին հայ բնակիչները: Գոմք համայնքը գտնվում է ՀՀ Վայոց ձորի մարզի Վայքի տարածաշրջանի, Ախտա գետի ափամերձ լանջերի վրա, ծովի մակարդակից 1800մ բարձրությամբ: Այն գտնվում է մարզկենտրոնից 35 կմ հեռավորության վրա: Սահմանակից է Զառիթափ և Արտավան համայնքներին և Նախիջևանին: Բնակչությունը հինականում զբաղվում է անասնապահությամբ ու հողագործությամբ: Համայնքում գործում է դպրոց, բուժկետ:

Նոր Ազլաբերդ

Բնակչության թիվը՝ 153 Նոր Ազնաբերդը (նախկինում Գյուլիստան) կառուցվել է 1949 թվականին, բնակեցված է եղել ադրբեջանցիներով: 1988թ. հայ-ադրբեջանական դեպքերից հետո այն վերաբնակեցվել է Նախիջևանի Ինքնավար Հանրապետության Զնաբերդ գյուղից Հայաստան փախած հայերով: Գյուղի ընդհանուր տարածքը կազմում է 1191 հա, ունի 44 բնակելի տուն և 169 բնակիչ: Գյուղի միջով անցնում է Զահուկ և Լվիս կոչվող գետակները: Գյուղը սահմանակից է Նախիջևանի Բզկով գյուղին, որի հետ ունի մոտ 5կմ սահման, սահմանակից է նաև մարզի Խնձորուտ և Սերս գյուղերին: Մարզկենտրոնից հեռու է 46կմ, ծովի մակերևույթից բարձր է 1630մ: Գյուղը կրթական հաստատություն չունի, երեխաները հաճախում են հարևան Խնձորուտ գյուղի դպրոց:

Կարմրաշեն

Կարմրաշեն (նախկինում՝ Քյոթանլի, Քյոթանլու) գյուղը գտնվում է Հայաստանի Վայոց ձորի մարզի Վայքի տարածաշրջանի հյուսիսարևմտյան կողմում գտնվող Վայոց լեռան ստորոտում, Հերիեր գետի վերին հոսանքի բարձրադիր սարավանդում: Ծովի մակարդակից բարձր է 2030 մ: Սահմանակից է՝ հյուսիս-արևելքից՝ Զերմուկ, հարավ-արևելքից՝ Հերիեր, հարավ-արևմուտքից՝ Մալիշկա, հյուսիս-արևմուտքից՝ Գողթանիկ համայնքներին: Շրջակայքում կան անտառակներ: Մոտակայքում գտնվող հրաբխային խարամներն օգտագործվում են որպես շինարարական ավազ: Տեղանքը քամոտ է: Գյուղի հիմնադրման տարեթիվը ստույգ չէ: Գյուղի շրջակայքում կան հնավայրեր և պատմաճարտարապետական կոթողներ: Գյուղից մեկ կմ հարավ-արևելք գտնվում է Պողոս-Պետրոս խաչքարը, հարավ-արևմուտքում խարաբաներ գյուղատեղին է, հյուսիս-արևմուտքում՝ Գենգարա գյուղատեղին: Խաչքարերը վերաբերում են 10-13-րդ դարերին: Ղևոնդ Ալիշանը Կարմրաշենին է նույնացնում Սյունիք աշխարհի Վայոց ձոր գավառում հիշատակվող Գուտենի գյուղը: 1963 թվականին այստեղ հիմնվել էր բանավան՝ Արփա-Սևան ջրատարի բանվոր-ծառայողների համար: Այժմյան գյուղի տարածքը բնակեցվել է 1916 թվականից 1925 թվականն Նախիջևանից երգաղթածներով, ինչպես նաև Գնդեվազից, Վերնաշենից և այլ վայրերից եկածներով: Նույն շրջանում հարևան տարածքներից Կարմրաշեն են տեղափոխվել նաև ադրբեջանցիներ: 1988 թվականին գյուղի ադրբեջանցի բնակչությունը տեղափոխվեց Ադրբեջան, իսկ նրանց փոխարեն գյուղ ներգաղթեցին մեծ թվով ադրբեջանահայեր, որոնց մեծ մասը հետագա տարիներին տեղափոխվեց այլ բնակավայրեր:

ՓՈՌ

Բնակչություն՝ 151 Փոռ բնակավայրը գտնվում է Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզում, Արփա գետի ձախ կողմում, Վայքի լեռների հյուսիսային փեշերին, մարզկենտրոնից՝ 27 կմ հարավ-արևելք: Այն վերաբնակեցվել է 1928 թվականին Խոյի Սավրա գյուղից ներգաղթած ընտանիքներով: Գյուղն ունի 1934 հա տարածք, սահմանակից է մարզի Զառիթափ, Մարտիրոս և Ազատեկ համայնքներին: Ծովի մակարդակից գտնվում է 1510 մ բարձրության վրա: Կլիման մերձարևադարձային է, ձմռանը՝ ցուրտ, ամռանը զով: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, այգեգործությամբ, հացահատիկի, բանջարաբուստանային և կերային կուլտուրաների մշակությամբ: Փոռի տարածքում են գտնվում Աբ. Աստվածածին (1910 թ.), եռանավ բազիլիկ (1830 թ.) եկեղեցիները և XIII-XIV դարերի խաչքարեր: Գյուղն ունի բուժկետ և առևտրի կրպակ:

Արտավան

Բնակչության թիվը՝ 330 Այն գտնվում է Վայոց ձորի մարզի Վայքի տարածաշրջանում՝ Վայք-Սիսիան խճուղու աջ կողմում, մարզի հարավարևելյան մասում: Հեռավորությունը մարզկենտրոն Եղեգնաձոր քաղաքից 37կմ է, հանրապետական նշանակության ճանապարհից՝ 9կմ: Հյուսիսից և արևելքից սահմանակից է Սարավանին, արևելքից՝ Սյունիքի մարզին, հարավ-արևելքից՝ պետական սահմանին /Ադրբեջանի Հանհապետություն/, հարավից և հարավ-արևմուտքից՝ Գոմքին, արևմուտքից՝ Զառիթափին, հյուսիս-արևմուտքից և հյուսիսից՝ Գնդեվազ գյուղական համայնքին: Գյուղը հիմնադրվել է 10-18-րդ դարերում: Նախկինում այստեղ եղել է հինգ բնակատեղի՝ <> (Դարբնի), <>, <> /Լուսաբեր/, <>, <>: Այս բնակատեղիներից մի քանիսի մասին որոշ տեղեկություններ մեզ են հասել Գաբրիել Տեր-Հովհաննիսյանի (Քաջբերանի) <> գրքից (1870-ական թվականներ): Մինչև 1949 թվականը գյուղը կոչվել է Զուլ, որը համապատասխանում է գյուղի այժմյան տարածքին: Բնակչությունը ռուս- պարսկական պատերազմի տարիներին ներգաղթել է Խոյ, Սալմաստ գավառներից, նախ բնակվել է Ախաչ գյուղում, ապա այնտեղից տեղափոխվել և վերաբնակվել Զուլում: Գյուղը վերաբնակեցվել է 1949թ. մարտ ամսից ու վերանվանվել՝ Արտավան: Գյուղը գտնվում է ծովի մակերևույթից 1860մ բարձրության վրա: Կլիման ձմռանը ցրտաշունչ է, ամռանը՝ զով: Հաճախակի են չորային, երաշտի տարիները: Գյուղից վերև բարձրաբերձ գագաթներով սարեր են, որոնց լանջերից բխող աղբյուրները խմելու և ոռոգման ջուր են մատակարարում գյուղին: Գյուղում գործում է միջնակարգ դպրոց, բուժկետ, կապի հանգույց: Գյուղի տնտեսության գլխավոր ճյուղը գյուղատնտեսությունն է: Հիմնականում զբաղվում են հողագործությամբ և անասնապահությամբ:

Ջեղես

Գյուղը 1988 թվականի նոյեմբեր ամսից վերաբնակեցվել է Նախիջևանի շրջանի Ազնաբերդ գյուղից արտագաղթած հայերով: Գյուղը գտնվում է մարզկենտրոնից 20 կմ հյուսիս արևելք: Այն փռված է Վարդաբլուր և Հարսնասար լեռների ստորոտում՝ ծովի մակերևույթից բարձր է 1500-1600 մ: Գյուղն ավելի հին է քան ենթադրվում է, որի վկայությունն են զարդաքանդակներով խաչքարերը և հունական տառերով գերեզմանաքարերի արձանագրությունները, ինչից կարելի է ենթադրել, որ այստեղ ապրել են հայեր, հույներ, ադրբեջանցիներ, որից հետո այս գյուղում իրենց հանգրվանն են գտել Նախիջևանից տեղահանված հայերը: Գյուղի շրջակայքում կա երկու հին գյուղատեղիներ: Գերեզմանաքարերի արձանագրություններից ենթադրվում է, որ գյուղերից մեկը հունական է եղել: Հին հայկական գերեզմանոցի մոտակայքում հայտնաբերվել է ջրաղաց, ինչը թույլ է տալիս ենթադրել, որ գյուղի բնակիչները նախկինում էլ

զբաղվել են հացահատիկի մշակությամբ: Բոլոր ժամանակներում գյուղի հիմնական եկամտի աղբյուրը եղել է հողագործությունը և անասնապահությունը: Մինչև 1988 թվականը գյուղն անվանվել է Ջեյթա, իսկ 1988 թվականի վերաբնակեցումից հետո՝ Ջեդեա: Ըստ Ստեփանոս Օրբելյանի՝ դեռ միջնադարում գոյություն է ունեցել Վայոց ձոր գավառի Ջեդյա գյուղը: Գյուղի պատմության վերաբերյալ այլ մանրամասներ չկան: Գյուղը գտնվում է ՀՀ Վայոց ձորի մարզի հյուսիս արևելյան մասում: Սահմանակից է մարզի Ագարակաձոր, Վայք, Մալիշկա ու Ագատեի համայնքներին: Գյուղի տարածքով անցնում է Արփա գետը: Գյուղն ունի դպրոց, բուժկետ :

Հեեր

Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, հացահատիկի, կերային կուլտուրաների մշակությամբ և պտղաբուծությամբ: Հերիերից մոտ 1 կմ հյուսիս-արևելք գտնվում է VIII դարից հիշատակվող Սուրբ Սիոն մենաստանը՝ կազմված երկու եկեղեցուց և մատուռից: Հերիերում՝ Սուրբ Սիոն միանավ եկեղեցին հնագույնն է (կառուցված կիսամշակ ավազաքարով) և ունի հայ ճարտարապետության համար եզակի հորինվածք, ուղղանկյուն թաղածածկ դահլիճը արևելքից և արևմուտքից ավարտվում է կիսաշրջանաձև աբսիդով: Նրան հարավից կից Սուրբ Աստվածածին եկեղեցին (1282-1283) նույնպես միանավ է, թաղածածկ, արևելքում՝ երկու միմյանց հավասար կիսաշրջանաձև աբսիդներով: Միանավ փոքրիկ մատուռը կից է Սուրբ Սիոն եկեղեցուն հյուսիսից: Պարսպապատ մենաստանի գերեզմանոցում կան XIII-XVII դդ. արձանագրություններով խաչքարեր: Գյուղամիջի Սուրբ Գևորգ եկեղեցին (XIX դար) երկու զույգ մույթերով եռանավ բազիլիկ է: Հերիերից հարավ պահպանվել են կիսավեր Սուրբ Գրիգոր Լուսավորիչ մատուռը (1296) և Սուրբ Գևորգ (Չիքի վանք, 1297) փոքր եկեղեցին, իսկ մոտ 1 կմ հարավարևելյան, լեռան գագաթին՝ «Կապույտ» ոչ մեծ բերդը (XIII-XIV դարեր): Հերիերից 3 կմ հյուսիս, գյուղատեղիում պահպանվել է կիսամշակ բազալտով կառուցված եկեղեցու աբսիդը, որի մոտ, պատվանդանի վրա կանգուն են երկու քանդակազարդ խաչքարեր: Գյուղատեղիի շրջակայքում կան 1282 թ. մեծ ու շքեղ խաչքար, XIII-XV դդ. պարզունակ քանդակներով ոչ մեծ խաչքարեր, կենցաղային թեմաներով քանդակազարդ տապանաքարեր:

Արավան

Բնակչության թիվը՝ 291 Սարավանը վերաբնակեցվել է 1988թ-ին: Նախկինում՝ 781թ-ին Սարավան գյուղի տարածքում է գտնվել Թերփ բնակավայրը: Գյուղի տարածքում կան հին խաչքարեր և գերեզմանաքարեր: 1988թ-ից գյուղը բնակեցվել է երիտասարդ ընտանիքներով: Այն կազմված է երեք բնակավայրերից՝ Սարավան, Սարալանջ և Ուղեձոր Սարավան գյուղը գտնվում է ծովի մակերևույթից 1600 մ բարձրության վրա: Լեռնային գյուղ է, շրջափակված է գեղեցիկ անտառներով: Համայնքի տարածքով է անցնում Երևան-Մեղրի միջպետական մայրուղին, որի աջ և ձախ կողմերում են գտնվում Սարավան և Սարալանջ գյուղերը: Հեռավորությունը մարզկենտրոնից 35 կմ է, Վայք քաղաքից՝ 18կմ: Համայնքը սահմանակից է Վայոց ձորի մարզի Արտավան, Գնդեվազ և Սյունիքի մարզի Գոռայք համայնքներին: Գյուղում հիմնվել են նոր այգիներ, բնակչության մեծ մասն զբաղվում է անասնապահությամբ: Գյուղում գործում է դպրոց և բուժկետ:

Համայնքի քաղաքային բնակչությունը հիմնականում զբաղվում է առևտրով, հյուրանոցային կամ ավտոտեխսպասարկմամբ իսկ գյուղական բնակչությունը՝ անասնապահությամբ և հողագործությամբ, մեղվաբուծությամբ, պտղաբուծությամբ, ինչը ոչ բոլոր դեպքերում է ապահովում բավարար եկամուտներ ապրուստի միջոցները հոգալու համար, նպաստում համայնքի բնակչության միգրացիայի աճին, հետևաբար համայնքում առաջնային անհրաժեշտություն է աշխատատեղերի ստեղծումը:

Վայք խորոշարցված համայնքն ունի բազմաթիվ կարիքներ, որոնք օրակարգային հարցեր են՝ նորացված գյուղատնտեսական տեխնիկայի ձեռքբերում, փողոցային լուսավորության խնդիրներ, աղբահանություն, ներհամայնքային և հանդամասային ճանապարհների բարեկարգում: Գյուղական ոչ բոլոր բնակավայրերում կան երիտասարդական և այլ ժամանացային կենտրոններ:

Համայնքը գտնվում է Վայոց Ձոր մարզի աշխարհագրական կենտրոնում: Այն հանդիսանում է տուրիստական ճամբորդությունների խաչմերուկ՝ համայնքով է անցնում դեպի Ջերմուկ, Սյունիք, Արցախ և Իրանի իսլամական հանրապետություն տանող ճանապարհները:

3. ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ

Վայք համայնքի տնտեսությունը բազմազան է՝ մի կողմում մրցունակ, արտադրողական, արդյունավետ կազմակերպված մի քանի բիզնեսներ են (հյուրանոցներ, հանքային ջրերի կամ գազավորված ըմպելիքների շաղցում, գինեգործություն), մյուս կողմում՝ ցածր տնտեսական մրցունակությամբ ձեռնարկություններ (մթերային փոքր, խանութներ, առևտրի տաղավարներ): Մրցունակ ձեռնարկությունները ինչպես նշվեց կենտրոնացած են գինեգործության, ջրերի, արտադրության, այգեգործության (տանձ, խնձոր, կեռաս, սալոր), մեղվապահության, բնական թեյերի արտադրության, բնական քարերի մշակման, հիդրոշինարարության ճյուղերում, ռեստորանային և հյուրանոցային սպասարկման մեջ (մոտ 25 ձեռնարկություններ): Վայք համայնքում գործում է 67 հասարակական խանութներ: Ձեռնարկությունների մրցունակությունը ցածր է առևտրի, սննդարդյունաբերության, բնակչության կենցաղային սպասարկման ոլորտներում, ինչպես նաև անասնապահության և հողագործության մեջ: Ընդհանուր առմամբ ԱՊՀ և արևմտյան երկրներ են արտահանվում համայնքում շաղցվող գինիները, հանքային ջրերն ու բնական թեյերը:

Վայքի տնտեսության հեռանկարը ռազմավարական և բարելավվող ճյուղերն են, որտեղ կուտակված է տնտեսական զարգացման պոտենցիալը: Տուրիզմի և այգեգործության զարգացման շուրջ պետք է կառուցվի Վայքի տնտեսության զարգացման առանցքը: Անասնապահությունը թույլ ճյուղերից է, կովերի կաթնատվությունը ցածր է հանրապետության միջին ցուցանիշից, մթերման գները ևս ցածր են և չեն ապահովում շահույթաբերություն: Նույնը վերաբերվում է նաև հացահատիկային կուլտուրաների մշակմանը: Վերջին երկու տարվա ընթացքում համայնքում կատարվող ներդրումների մեծ մասն ուղղվում է դեպի այգեգործություն և պտուղների վերամշակման ոլորտներ, արևային էներգիայի արտադրությանը: Մարզում տեխնոլոգիական զինվածությամբ առաջատար գինեգործարանը, ծիրանի օղու արտադրամասը, ջրերի արտադրամասը, սառնարանային տնտեսությունները գործում են Վայք համայնքում:

Վայք համայնքը իր բնակավայրերով ունի շատ գեղատեսիլ հնամյա բնակավայրեր, հարակից պատմամշակութային հուշարձաններ (գեներալ Պասկևիչի կամուրջը, ս. Տրդատ եկեղեցին, Մարտիրոսի վիմափոր. Ս. Երրորդություն Երուսաղեմ եկեղեցիները) որոնք կարող են հետաքրքրություն ներկայացնել զբոսաշրջության բնագավառում: Համայնքի աշխարհագրական դիրքը բարենպաստ պայմաններ է ստեղծում զբոսաշրջիկներին ժամանակավոր հյուրնկալելու, կացարաններով ապահովվելու համար, քանի որ համայնքով է անցնում դեպի Արցախ և Իրանի

հանրապետություն տանող միջպետական մայրուղին: Վայք համայնքը հանդիսանում է շատ հարմար բնակավայր՝ արագ սննդի կազմակերպման և գիշերակացի հնարավորություն կազմակերպելու համար: Վայք քաղաքում զարգացել է ռեստորանային և հյուրանոցային բիզնեսը:

Համայնքը նաև շատ հնարավորություններ ունի գյուղերում զարգացնելու էկոտուրիզմը:

Համայնքում փոքր ու միջին ձեռնարկատիրության զարգացման հիմնախնդիրներն են՝

- *օտարերկրյա ներդրողների համար ցածր գրավչություն,*
- *նպաստավոր և խրախուսող օրենսդրական դաշտի կադրերի ձևավորման կարիք,*
- *թողարկվող արտադրանքի ընդհանուր ծավալում արտահանվող արտադրանքի փոքր ծավալ:*

Մրցունակ ձեռնարկատիրական գործունեություն ծավալելու համար համայնքում նպատակահարմար է անցում կատարել ինովացիոն արտադրությանը և ինովացիոն բիզնեսին: Համայնքում հատկապես կարևոր է բարձր որակ ապահովող զբոսաշրջության ինդուստրիայի համալիր զարգացումը, ինովացիոն տեխնոլոգիաներով աշխատող փոքր և միջին ձեռնարկությունների կայացումը:

Նախատեսվում են նաև մասնավոր ընկերություններում մասնակցային ներդրումներ:

Համայնքապետարանի կողմից փոքր ու միջին ձեռնարկատիրության զարգացմանը աջակցելու մեխանիզմները հետևյալն են՝

- *համայնքային տնտեսության բոլոր ոլորտներում ինովացիոն նախաձեռնությունների խրախուսում և աջակցություն,*
- *արտոնյալ պայմաններով տարածքների հատկացում:*

Առողջապահության բնագավառում Վայք համայնքը ներկայացված է մեկ հիվանդանոցով (95 մահճակալ) , մեկ պոլիկլինիկայով (94 բուժաշխատող): Բոլոր բնակավայրերում գործում են բուժկետեր: Համայնքում գործում են տասնհինգ դպրոցներ, մանկական արվեստի դպրոց, հինգ գրադարաններ, չորս մշակույթի տներ, 3 մանկապարտեզներ, մեկ մարզադաշտ և մեկ մարզադպրոց, շախմատի ակումբ: Վայքի հիմնական դպրոցը նախատեսած մինչև 500 երեխաների համար, միջնակարգ դպրոցը մինչև և 1100 երեխաների համար: Արինի և Ազատեկի հիմնական դպրոցները մինչև 200 աշակերտների համար, Ջեդեա գյուղի դպրոցը մինչև 100 աշակերտների համար: Ջառիթափի դպրոցը 300 աշակերտների համար: Գյուղական դպրոցները այժմ գործում են թերձանրաբեռնվածությամբ, Վայքի հիմնական դպրոցը գործում է գերձանրաբեռնվածությամբ:

Վայք համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակը ներկայացնելիս կարող ենք չափորոշիչ վերցնել 1 շնչին հասնող միջին եկամուտը, որը տատանվում է 35000-50000 դրամի սահմաններում: Վիճակի բարելավման համար առաջիկա 5 տարիների ընթացքում աշխատանքներ են տարվելու աղքատության հաղթահարմանը ուղղված միջոցառումների ներգրավմանը և ակտիվացմանը, ուսումնասիրվելու է այլ համայնքների,ինչպես նաև միջազգային փորձը: Խթանվելու է զբաղվածության և ուսուցման ծրագրերը (արհեստների, ժամանակակից կարճաժամկետ վերապատրաստումների, ձեռներեցության և ինքնազբաղվածության և այլ ծրագրեր): Նմանատիպ ծրագրերի արդյունավետ կազմակերպման համար համայնքը ակտիվ կներգրավվի պետական բոլոր ծրագրերում:

Կարևոր բաղադրիչ է նաև կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխաներ խնամքի և պաշտպանության միջոցառումը, խնամակալության մարմնի աշխատանքների ակտիվացումը, առանց ծնողի խնամքի մնացած երեխաների հայտնաբերումը, հետևողական աշխատանքների իրականացումը նրանց լավագույն շահի ապահովումը:


Պլանավորվում և աշխատանքներ են տարվում առողջապահական ոլորտի ծառայությունների լավացման համար՝ մասնավորապես պետական պատվերի շրջանակներում միայնակ, առավել խոցելի խմբերի աջակցությանը ուղղված:

Կենսաթոշակառուների (սոցիալական թոշակառու, հաշմանդամություն ունեցող) և անապահով բնակչությանը ուղղված տարբեր միջոցառումների իրականացում(սնունդ, հագուստ և այլ իրերի ապահովում): Նրանց իրացված լինելու իրավունքին ուղղված կրթական, մշակութային միջոցառումների կազմակերպում:


Գյուղական բնակավայրերի բնակչության կենսամակարդակի բարձրացման համար տարբեր միջոցառումների կազմակերպում, մասնավորապես գյուղ ապրանքների ապրանքային տեսքին և որակին ուղղված միջոցառումների խթանում, շուկայում դրանց իրացման համար պայմանների ստեղծում, շարունակություն կարող է հանդիսանալ ջերմատների և ինտենսիվ այգիների հիմնումը:

Բնակավայրերը	Ընդ. բնակիչ	Կանայք	տղամ արդիկ	թոշակառու	փախստակ ան	Աշխատունակ բնակիչ
Վայք քաղաք	6631	3242	3389		41	
Զառիթափ	1371	671	700	217	7	840
Սարավան	306	151	155	26	-	195
Արտավան	316	142	174	57	1	135
Գոմք	237	131	106	22	2	220
Մարտիրոս	590	281	309	90	1	340
Սերս	211	102	109	52	2	135
Բարձրունի	360	145	215	66	4	202
Խնձորուտ	509	256	253	77	1	270
Նոր Ազնաբերդ	149	73	76	27		72
Զեղեա	159	84				
Հերիեր	664	314	350			
Արին	307	158	149		4	
Կարմրաշեն	213	88	125			
Փոռ	140	63	77			
Ազաատեկ	579	281	298			
ընդամենը	12742	6180	6562	634	35	2409


ՄԵՌԱՏԱՐԻՔԱՅԻՆ ՍԱՆԴՂԱԿ



ՏԱՐԻՔԱՅԻՆ ՍԱՆԴՂԱԿ



ԲՆԱԿԶՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԱՆ ԱՃԸ



Տարի	Ծառայողների թիվը	Մահերի թիվը	Բնական աճը
2017	83	60	23
2018	70	42	28
2019	56	53	3
2020	36	81	-45
2021	60	49	11
2022	45	51	-6

4. ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԸ

Ծրագիրը ֆինանսավորվում է Եվրո-միության կողմից, իսկ Վայքի համայնքապետարանը նշված ծրագրին մասնակցում է համաֆինանսավորման եղանակով: Ծրագիրը հնարավորություն կտա բնակչությանը կրճատել էլեկտրագիայի համար կատարվող ծախսերը:

Քանի որ Վայք համայնքը 2014թ. –ից անդամակցում է <<Քաղաքապետերի դաշնագիր-Արևելք>> ծրագրին, ծրագրի շրջանակներում, ստորագրել է համաձայնագիր մինչև 2020թ. մթնոլորտ արտանետվող CO2 գազի ծավալը 20% կրճատելու վերաբերյալ: Վերը նշված միջոցառումը հանդիսանում է Վայքի էներգետիկ կայուն զարգացման ծրագրի մի բաղադրիչը, որի արդյունքում կկրճատվի նաև ածխաթթու գազի արտանետման ծավալները:

2. Հայաստանի տարածքային զարգացման հիմադրամի և Վայքի համայնքապետարանի կողմից նախատեսվում է իրականացնել խոշորացված համայնքի զարգացման ծրագիր, որը կնպաստի համայնքային ենթակառուցվածքների զարգացմանը: Այն իր մեջ ներառում է Մեքենատրակտորային պարկի ստեղծում Ներհամայնքային և միջհամայնքային ճանապարհների բարեկարգում Ներհամայնքային ուղևորափոխադրումների կազմակերպում

Չրերի չորացման արտադրամասի ստեղծում Ծրագիրը հնարավորություն կտա բարելավել միջհամայնքային և հանդամասային ավտոճանապարհները, Արին, Զեղեա, Ազատեկ և Փոռ գյուղերի բնակչությանը մեքենատրակտորային պարկը կտրամադրի իր միջոցները՝ ժամանակին կազմակերպելու գյուղատնտեսական և այգեգործական աշխատանքները: Չրերի չորացման արտադրամասի ստեղծումը Ազատեկ գյուղում հնարավորություն կտա համայնի բնակչությանը զբաղվել չրերի արտադրությամբ և կապահովի ևս 5-10 նոր աշխատատեղեր:

3. ՄԱԿ –ի զարգացման ծրագրի գրասենյակ և Վայքի համայնքապետարանի համատեղ ջանքերով նախատեսվում է իրականացնել համայնքի արտաքին լուսավորության ծրագիր, որի շրջանակներում , նախատեսվում է Վայք քաղաքում իրականացնել արտաքին լուսավորության համակարգի արդիականացում, էներգախնայող լուսատուների միջոցով:


Զարգացման ծրագրերի շրջանակներում համայնքում նախատեսվում է իրականացնել

1. Համայնքի Ջառիթափ, Գոմք, Մարտիրոս, Սերս և Բարձրունի բնակավայրերի ոռոգման ցանցերի կառուցում
2. Վայք քաղաքի Շինարարների 1 , Շինարարների 2 և Մայիսյան փողոցների հիմնանորոգում, ասֆալտապատում
3. Ջառիթափ մանկապարտեզի առաջին մասնաշենքի հիմնանորոգում
4. <<300 դպրոց 500 մանկապարտեզ >> ծրագրի շրջանակներում Վայք քաղաքում կառուցել նոր մանկապարտեզ
5. Վայք համայնքում սպորտային կոմպլեքսի կառուցում
6. Խնձորուտ բնակավայրի խմելու ջրի ջրագծի 1200 մ և գլխամասի կառուցում:
7. Վայք համայնքի փողոցային լուսավորության ցանցի վերանորոգում, ԼԵԴ լամպերով վերազինում
8. Սարավան –Սարալանջ գազատարի ներքին ցանցի կառուցում
9. Հերիեր համայնքի 1-ին փողոցի ասֆալտապատում
10. Վայքի մշակույթի տան վերանորոգում
11. Վայքի քաղաքային այգու բարեկարգում
12. Համայնքի մեքենատրակտորային պարկի թարմացում
13. Վայքի խոշորացված համայնքում առկա ջրագծերի կապիտալ նորոգում և նոր ոռոգման համկարարգերի կառուցում և շահագործում
14. Նոր գերեզմանոցի և կառուցապատում
15. Բազմաբնակարանային շենքերի բակային տարածքների ասֆալտապատում
16. Խաղահրապարակների կազմակերպում
17. Աղբահանության համակարգի բարելավում, այդ թվում նոր աղբատար մեքենաների ձեռքբերում, գյուղական համայնքներում աղբահանության կազմակերպում և աղբավայրերի բարեկարգում:
18. Ստեղծել թափառող կենդանիների ստերջացման կենտրոն
19. Զարգացնել զբոսաշրջությունը
20. Կառուցել ֆոտովոլտային կայանների համալիր

5. ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ

Համայնքի բյուջեի եկամուտները գոյանում են համայնքի բյուջե վճարվող հողի հարկից, շենքերի և շինությունների գույքահարկից, փոխադրամիջոցների գույքահարկից, ֆիզիկական ու իրավաբանական անձանց անշարժ գույքի հարկից, վարձակալական վճարներից, տեղական տուրքերից, պետական տուրքերից, տեղական վճարներից, ֆինանսական համահարթեցման նպատակով տրվող դոտացիաներից, այլ դոտացիաներից և պետբյուջեից տրամադրվող նպատակային հատկացումներից: Համայնքի 2021 թվականի բյուջեի եկամտային մասում նախատեսվել են 794463,2 հազար դրամ եկամուտներ, իսկ փաստացի հավաքագրվել է 714574,2 հազար դրամ: Համայնքի 2021 թվականի բյուջեի ծախսային մասում նախատեսվել են 922798,6 հազար դրամ ծախսեր, իսկ փաստացի կատարվել է 696079,1 հազար դրամի ծախս: Վայք խոշորացված համայնքի 2022 թվականի տարեկան բյուջեի եկամտային մասում նախատեսվել են 708246,0 հազար դրամ եկամուտներ, իսկ ծախսային մասում նախատեսվել են 905000,0 հազար դրամ ծախսեր: Համայնքի բյուջեի սեփական եկամուտները նախորդ տարիներին փոքր մաս են կազմել, սակայն դրանք 2022 թ. բյուջեով նախատեսված տվյալներով զգալի աճել են: 2021 թվականին համայնքի բյուջեի սեփական եկամուտները փաստացի կազմել են 247853,8 հազար դրամ, իսկ 2022 թվականի բյուջեով նախատեսվել է 296675,4 հազար դրամի սեփական եկամուտ:

Վայք համայնքի եկամուտների և ծախսերի դինամիկան 2021-2022թթ



Առաջիկա տարիներին ակնկալվում է պետության կողմից տրամադրվող ֆինանսական համահարթեցման նպատակով տրվող դոտացիաների և սուբվենցիաների չափի ավելացում, ինչպես նաև նախատեսվում է ավելացնել համայնքի բյուջե մտնող սեփական եկամուտների բաժինը՝ ի հաշիվ անշարժ գույքի հարկի, տեղական տուրքերի, տեղական վճարների և այլ եկամուտների: Համայնքային ծրագրերի իրականացման գործում նախատեսվում է ներգրավել նաև պետական և դոնոր կազմակերպությունների աջակցությունը:

6. ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐ ԵՎ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1) գործարար միջավայրի բարելավումը և ձեռնարկատիրության խթանումը,

Համայնքի գործարար միջավայրի բարելավման և ձեռնարկատիրության խթանման զարգացման խոչընդոտները, պատճառները բազմազան են՝ սկսած մրցունակ ծառայությունների, աշխատանքների, ապրանքների արտադրությունից մինչև նրանց իրացում: Գյուղական բնակավայրերում արտադրված գյուղմթերքները իրացվում են շուկայականից անհամեմատ ցածր գներով: Այստեղ գերակշռում են շահութաբերության ցածր մակարդակով աչքի ընկնող գյուղմթերքների արտադրությունը, գյուղացիները դժկամությամբ են հրաժարվում ավանդական մշակություններից անցում կատարել դեպի ավելի մրցունակ (օրինակ հացահատիկային կուլտուրաների, կաթնամթերքի, մսամթերքի արդադրությունից՝ ավելի շահութաբեր՝ այգեգործություն, կամ ասենք ավելի պահանջարկ ունեցող և մրցունակ մշակաբույսերի մշակություն): Գյուղատնտեսության արդյունաբերականացումը և արտադրություն-վերամշակում-շուկա շղթայի լիարժեք գործարկման բացակայությունը հնարավորություն չի տալիս այդ ոլորտում ապահովել զբաղվողների եկամուտների աճ: Համայնքի գործարար հնարավորությունների <<քարոզչության>> բացակայությունը, չի նպաստում օտարերկրյա ընկերությունների կամ սփյուռքահայության կողմից համայնքում ներդրումներ անելու գրավչությանը:

2) նախադպրոցական կրթության և արտադպրոցական դաստիարակության կազմակերպումը,

3) 2022-2023թթ- համայնքում նկատվում է մանկապարտեզների շենքային պայմանների բարելավման խնդիրներ, մանկապարտեզներ հաճախող երեխաների քանակի մեծացման հետ զուգընթաց: Համայնքի ֆինանսական հնարավորությունների դեպքում երկու համայնքային մանկապարտեզներին անհրաժեշտ է կառուցել լրացուցիչ մասնաշենքեր:

4) ակտիվ մշակութային և մարզական կյանքի կազմակերպումը՝ երիտասարդության ներգրավմամբ, Համայնքում գործում է 2 մարզական կառույց՝ մարզադաշտ և մարզադպրոց: Սակայն շատ մակազաներում բացակայում է մարզչական կազմը /բոքս, ըմբշամարտ, բասկետբոլ և այլն/:

5) համայնքի բնակչության սոցիալական պաշտպանությունը,

Համայնքում առկա է գործազրկության բարձր մակարդակ: Դիտվում նաև վերջին 3 տարիներին արտաքին տրանսֆերտների կտրուկ նվազում: Գործարար ակտիվության մակարդակը ցածր է (տնտեսական մրցակցություն, մրցունակ արտադրանք, տնտեսաաաշխարհագրական դիրք և այլն): Այս հիմնական գործոններով է պայմանավորված բնակչության սոցիալական պաշտպանվածության ցածր մակարդակը:

6) համայնքի բնակավայրերի կառուցապատումը, բարեկարգումը և կանաչապատումը, համայնքի աղբահանությունը և սանիտարական մաքրումը, կոմունալ տնտեսության աշխատանքների ապահովումը, ինչպես նաև համայնքային գերեզմանատների պահպանումը և գործունեության ապահովումը.

Խոշորացված համայնքի զարգացման համար լուրջ խոչընդոտ է համայնքի բնակավայրերի բարեկարգումը, կանաչապատումը, սանիտարական մաքրումը և աղբահանության կազմակերպումը: Ֆինանսական սուղ միջոցների պատճառով համայնքը չի կարողանում ձեռք բերել աղբատար նոր մեքենաներ, իրականացնել կանաչապատում և սանիտարական մաքրում խոշորացված համայնքի տարածքում:

Վայրը համայնքին անհրաժեշտ է նաև նոր գերեզմանոցի տարածք և դրա կառուցապատում:

7) Համայնքային տրանսպորտի աշխատանքի կազմակերպումը, համայնքային ճանապարհային ենթակառուցվածքների պահպանումը և շահագործումը.

Խոշորացվախ համայնքում իսպառ բացակայում են ներհամայնքային և միջհամայնքային ուղևորափոխադրումները, որի հիմնական պատճառն այն է, որ մասնավոր ընկերությունների համար նշված ծառայությունների մատուցումը շահութաբեր չէ:

Կարևոր խնդիր է նաև ճանապարհների բարեկարգման համար անհրաժեշտ ճանապարհային տեխնիկայի ձեռքբերումը, ինչը կախված է համայնքի բյուջեի սուղ հնարավորություններից:

8) գյուղական բնակավայր ընդգրկող համայնքներում գյուղատնտեսության զարգացման խթանումը,

Գյուղական բնակավայրերում պետք է օգնություն ցուցաբերել անցնելու առավել մրցունակ գյուղմթերքների արտադրության: Գյուղմթերքների արտադրության մեջ դեռևս ներդրված չէ, միջազգային չափանիշներին բավարարող պայմաններ, ինչը հնարավորություն կտա բարելավել արտադրանքի որակն ու արտաքին տեսքը, բարձրացնել մրցունակությունը:

9) համայնքում շրջակա միջավայրի պաշտպանությունը,

Աղբատար մեքենաների բացակայության պատճառով աղբահանության և սանմաքրման աշխատանքները պատշաճ որակով չեն իրականացվում խոշորացված համայնքի ողջ տարածքում /ներառյալ գյուղերում/: Համայնքում չկա էներգափնայողության մշակույթի բավարար մակարդակ, անհարժեշտ գիտելիքներ ու փորձ շրջակա միջավայրի պաշտպանության արդյունավետ իրականացման համար:

10) զբոսաշրջային հեռանկարներ ունեցող համայնքներում՝ զբոսաշրջության զարգացման ցածր մակարդակ. Համայնքն ունի զբոսաշրջության զարգացման հսկայական ներուժ (նպաստավոր աշխարհագրական դիրք, բարենպաստ կլիմա, հյուրանոցառեստորանային կայացած ենթակառուցվածքներ, գտնվում միջպետական և տուրիստական ուղղիների խաչմերուկներում): Այս ամենով հանդերձ համայնքի սբոսաշրջային ներուժը բավարար լուսաբանված չէ տարբեր տեղեկատվական աղբյուրներում, այդ թվում էլ Եկտորոնային միջոցներով:

11) համայնքային հասարակական կյանքին հաշմանդամների մասնակցության խթանումը,

Համայնքի հասարակական կյանքին հաշմանդամների ակտիվ մասնակցությունն ապահովելու համար բացակայում է համայնքի հասարակական կյանքն ապահովող կազմակերպությունների հաշմանդամների համագործակցությունը, ցածր է իրազեկվածության մակարդակը, համայնքում զգացվում է սոցիալական աշխատողների պահանջ: Անհրաժեշտ է ահապովել համայնք-սոցիալական աշատող-հաշմանդամ շղթային կենսունակությունը:

12) համայնքի երիտասարդության խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի և միջոցառումների կազմակերպում,

Համայնքն ունի մտավոր մեծ ներուժը, սակայն համայնքում առկա է երիտասարդների գործազրկության բարձր մակարդակ, որի արդյունքում նրանց մեծ մասը արտագնա աշխատանքի են մեկնում մայրաքաղաք կամ արտերկիր, աշխատատեղերի բացակայության պատճառով:

13) բարեգործության խթանումը՝ համայնքում մշակութային, կրթական, գիտական, առողջապահական, մարզական, սոցիալական և այլ հաստատությունների հիմնադրման, ֆինանսավորման, ինչպես նաև դրանց ֆինանսական անկախության ապահովման նպատակով:

6.1 Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՍ) վերլուծություն

Ուժեղ	Թույլ
<i>Բնական մրցակցային առավելություններ</i>	
<ul style="list-style-type: none"> • Ջրային ռեսուրսների առկայություն • Ոսկու, բազալտի, արճիճի հանքավայրեր • Առողջարանային Ջերմուկ քաղաքին հարևանություն • Մաքուր բնություն, մեղմ, տաք կլիմա • Արևային օրերի ռեկորդային քանակ • Միջպետական մայրուղին, հետագայում, Հյուսիս-Հարավ ավտոմայրուղին անցնում է համայնքի միջով • Բնական և պատմական բազմաթիվ հուշարձաններ • Գյուղատնտեսական նշանակության մեծաքանակ հողերի առկայություն • Ինքնահոս ոռոգում • Բազմազան բույսերի և դեղաբույսերի առկայություն • Զբոսաշրջության /էկոտուրիզմի/ զարգացման համար նպաստավոր պայմաններ և ռեսուրսներ • Բարձրագույն կրթություն ունեցող մարդկային ռեսուրսներ 	<ul style="list-style-type: none"> • Քաղաքի բրենդավորման բացակայություն • Արտագաղթի բարձր մակարդակ • Հեղեղատարների և ջրահեռացման համակարգերի վատ վիճակ • Սակավ կանաչապատ տարածքներ • Համայնային ենթակայության կառույցների վերանորոգման և գույքի թարմացման անհրաժեշտություն • Գործազրկության բարձր մակարդակ • Աղքատության բարձր շեմ • Բնակչության ցածր կենսամակարդակ • Միջհամայնքային և ներհամայնքային տրանսպորտի բացակայություն • Ժամանցի սահմանափակ հնարավորություն • Ֆինանսական այլընտրանքային միջոցների բացակայություն • Միջին մասնագիտական կրթություն ունեցող աշխատանքային ռեսուրսների պակաս
<i>Մասնագիտական, մարդկային մրցակցային առավելություններ</i>	
<ul style="list-style-type: none"> • Տուրիզմի զարգացման մասնագետներ • Տեխնոլոգներ • Ինժեներներ, երկրաբաններ • Գործարար ունակություններով մարդկանց մեծ տեսակարար կշիռ • Մեղվաբուծության բարձրորակ մասնագետներ • Բարձրագույն կրթություն ունեցող մարդկանց մեծ տեսակարար կշիռ 	
<i>Տեխնոլոգիական մրցակցային առավելություններ</i>	
<ul style="list-style-type: none"> • Տնական օդու, գինու, դոշաքի ավանդական տեխնոլոգիաներ • Սառնարանային տնտեսություններ • Գինեգործության ժամանակակից տեխնոլոգիաներ • Այգեգործության ժամանակակից տեխնոլոգիաներ • Մրգի վերամշակման (չիր, օղի) մրցունակ տեխնոլոգիաներ 	

ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ	ՍՊԱՌՆԱԼԻՔ
<ul style="list-style-type: none"> • Վայք համայնքն իր աշխարհագրական դիրքով գտնվում է մարզի կենտրոնում • Համայնքի միջով է անցնում միջպետական մայրուղին • Համայնք այցելող զբոսաշրջության աճ • ՏԻՄ ոլորտում միջազգային կազմակերպությունների կողմից իրականացվող ծրագրերի շարունակական բնույթ և աճ • Համագործակցության շրջանակների ընդլայնում • Տարբեր միջազգային կառույցների, հիմնադրամների և բարեգործական կազմակերպությունների հետ համագործակցություն • Գյուղական բնակավայրերում միջոցառումների կազմակերպում • Ներդրողների ներգրավում 	<ul style="list-style-type: none"> • Գործազրկության բարձր մակարդակ • Սոցիալապես անապահով ընտանիքների մեծ թիվ • Ներդրումների անբավարար մակարդակ • Շրջակա միջավայրի նկատմամբ անտարբերություն • Բնակչության արտագաղթի մեծ տոկոս • Ուղեղների արտահոսք • Ֆինանսական այլընտրանքային միջոցների ռեսուրսների բացակայություն • COVID 19 և պատերազմ

7. ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

7.1 Համայնքի զարգացման տեսլական

Վայք համայնքը բարեկարգ և բարեկեցիկ բազմաբնակավայր համայնք է՝ զարգացած գյուղատնտեսությամբ, զբոսաշրջությամբ ու սոցիալական ենթակառուցվածքներով, որտեղ բնակչության գերակշիռ մասն ապահովված եկամտաբեր աշխատանքով և ունի բավարար կենսապայմաններ: Համայնքի զարգացման ռազմավարությունն է՝ բարեփոխումներ անցկացնելու ճանապարհով հետևողականորեն բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական, մշակութային և հանգստի պայմանները, համայնքը դարձնել տարածաշրջանային զբոսաշրջության կենտրոն, մաքուր, բարեկարգ ու գրավիչ բնակավայր: Համայնքի տեսլականն է՝ ունենալ զարգացած զբոսաշրջությամբ, գյուղատնտեսությամբ, փոքր բիզնեսներով համայնք, որտեղ բնակիչներ կունենան զբաղավաճություն, երիտասարդները կվերադառնան և կմնան համայնքում: Դրան է ուղղված համայնքի կողմից կազմված առաջնահերթ ծրագրերի և նպատակների ձևակերպումը՝ ըստ առաջնահերթ բնագավառների, որը ներկայացված է հաջորդ բաժնում:

8. Համայնքի զարգացման ծրագրերի, նպատակների առաջադրում և կոնկրետ խնդիրների ձևակերպում

Ստորև ներկայացվում է համայնքի զարգացման ծրագրերի, նպատակների առաջադրում և կոնկրետ խնդիրների ձևակերպում՝ ըստ առանձին բնագավառների.

ԾՐԱԳԻՐ 1

«ՀՀ Վայոց ձորի Վայք համայնքի Զառիթափ բնակավայրի <<Շարաֆ Սուլթան>>, <<Մեշտեղ բանի>> կոչվող հանդամասերում և Գոմք բնակավայրի ոռոգման ջրատարի և ներքին ցանցի կառուցման աշխատանքներ»

Գյուղատնտեսությունը ամենակարևոր ոլորտներից է: Համայնքի Զառիթափ և Գոմք բնակավայրերում մոտ 1350 տնտեսապես ակտիվ բնակչություն զբաղվում է գյուղատնտեսությամբ: Գյուղատնտեսության շատ պրոցեսներ ինչպիսին են ոռոգումը, մշակաբույսերի ոռոտացիան, պարարտանյութերի և թունաքիմիկատների կիրառումը և անասունների ընտելացումը շատ կարևոր դեր ունեն համայնքում գյուղատնտեսության զարգացման համար: Համայնքի Զառիթափ և Գոմք բնակավայրերում առկա է ոռոգման ջրի խնդիր: Զառիթափ բնակավայրի վարելահողերը անջրդի են : Ինքնահոս ջրատարից հնարավոր է ոռոգելի դարձնել 75 հա վարելահող, որից կօգտվեն բնակավայրի 85-90 տնտեսություն: Ոռոգման ցանցի կառուցումը սկսվել է 2013 թվականից և շարունակվել մինչև 2017թվականը, որը ոռոգելի է դարձրել բնակավայրի մի թաղամասի տնամերձ տարածքները: Այսօր բնակիչների մոտ առաջացել է դժգոհություն, քանի որ չեն կարողանում վարելահողերից ստանան բավարար եկամուտ: Ոռոգվում են միայն բնակավայրի տնամերձ հողերը: Ծրագիրը անհրաժեշտություն է բնակավայրերի բնակիչների համար: Ոռոգման նոր ջրագծի անցկացումը հնարավորություն կտա 75 հեկտար տարածք դարձնել ոռոգվող և լրիվ մշակելի:

Գոմք բնակավայրի ոռոգման ցանցը կառուցվել է 1980- ականներին: Մեծամասամբ մայր առուներ են, որոնք հողային հոսքերի պատճառով քանդվել են, ինչի հետևանքով վերջին տարիներին մասամբ ոռոգվում է ընդամենը 8 հա հողատարածք: Արդյունքում կտրուկ նվազել է բանջարաբուստանային կուլտուրաների մշակումը և պտղատու ծառերի բերքատվությունը: Ոռոգման ցանցի բացակայությունը ազդում է նաև խմելու ջրի մատակարարման վրա, քանի որ մնացած 17 հա տնամերձերը ոռոգվում են խմելու ջրով, ինչի արդյունքում ամռան շոգ եղանակներին խմելու ջրի մատակարարումը դառնում է անկառավարելի: Ոռոգման ցանցի կառուցումը կնպաստի գյուղատնտեսության զարգացմանը, կոռոգվի Գոմք գյուղի տնամերձերի 90 % -ը, կտրուկ կավելանա տնտեսությունների բերքի որակը և եկամուտները, ինչպես նաև կկառավարվի խմելու ջրագիծը և ամռանը կմատակարարվի 24 ժամյա ջուր: Գոմք բնակավայրի ոռոգման ցանցի կառուցումից կօգտվեն 63 տնտեսություն՝ 110բնակիչ: Կոռոգվի 25 հա տնամերձ հողատարածք:

Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է 103 մլն ՀՀ դրամ, որից համայնքային բյուջեից ակնկալվում է ներդնել մոտ 36,0 մլն. դրամ, սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում՝ 67,0 մլն. դրամ : Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2022թ. ընթացքում:

ԾՐԱԳԻՐ 2

«Վայք համայնքի Մարտիրոս Սերսևի Բարձրունի բնակավայրերի ոռոգման ջրի ջրագծերի, գլխամասային կառույցների արտաքին ցանցերի հիմնանորոգման աշխատանքներ»

Զատիթափ համայնքի Մարտիրոս բնակավայրում գյուղատնտեսական կուլտուրաների ոռոգումը իրականացվում է „Մարտիրոս“, գետից : Ոռոգվում է միայն տնամերձ հողերը, ամառվա կեսին գետի ջուրը սակավանում է, և ոռոգումը ավելի դժվարանում: Բնակչության շրջանում առաջանում է դժգոհություններ ոռոգման ջրի սակավության պատճառով: Ոռոգումը իրականացվում է ըստ թաղամասերի: Ըստ տնտեսությունների կազմվում է ոռոգումը 13 օրը մեկ անգամ: Իսկ 13 օրը մեկ անգամ ոռոգումը նպաստում է բերքի սակավ և անվորակ աճին: Ոռոգումը արդյունավետ իրականացնելու համար անհրաժեշտ է անցկացնել ոռոգման ցանց: Մարտիրոս բնակավայրում ոռոգման ցանցը կառուցել են շատ վաղուց : Գտնվում է անբարվոք վիճակում, այդ պատճառով առկա է ոռոգման ջրի 70 տոկոսի կորուստ, ինչը հանգեցնում է բնակավայրում ոռոգման ջրի սակավության: Բնակավայրում 76 տնտեսություն չի կարողանում ոռոգում իրականացնել:

Ծրագրի իրականացումը նախատեսում է բնակավայրում անցկացնել ոռոգման արտաքին ցանցը: Ծրագրի իրականացումը անհրաժեշտություն է բնակավայրերի բնակիչների համար: Ծրագրի իրականացումը ոռոգելի կդարձնի 20 հա տարածք: Բարձրունի բնակավայրում ևս առկա է ոռոգման ցանցի խնդիր: Բարձրունի բնակավայրում բնակչությունը հիմնականում զբաղվում է գյուղատնտեսությամբ: Անհրաժեշտ է կառուցել ոռոգման արտաքին ցանց, որից կօգտվի բնակչության 80 տոկոսը : Շուրջ 50 հա վարելահող և 60 հա խոտհարք կդառնան ջրովի: Զրի սակավության պատճառով չեն կարողանում ստանալ սպասվելիք բերքը: Սերսև բնակավայրում բնակչության հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է: Բնակչության շուրջ 95 տոկոսից ավելին զբաղվում են գյուղատնտեսությամբ: Բնակավայրի ոռոգման համակարգի անցկացումը անհրաժեշտություն է բնակիչների համար:

Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է 57,0 մլն ՀՀ դրամ, որից համայնքային բյուջեից ակնկալվում է ներդնել մոտ 12,1 մլն. դրամ, սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում՝ 39,9,0 մլն. դրամ : Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2022թ. ընթացքում:

« ՀՀ Վայոց ձորի, Վայք համայնքի ներհամայնքային Մայիսյան փողոցի մասնակի վերանորոգում, Շինարարների փողոց հատված կմ 0+000 -կմ 0+112 , հատված կմ 0+112-կմ 0+403 մասնակի վերանորոգում և Հերիեր բնակավայրի 1-ին փողոցի ասֆալտապատման աշխատանքներ»

Շինարարների փողոցը Վայք քաղաքի ամենաբանուկ փողոցներից մեկն է , որը կապում է Վայք համայնքը Արին բնակավայրի, ինչպես նաև գնդի զինավարժարանի հետ: Փողոցի սկզբնամասում /հատվում է Ջերմուկի խճուղու հետ/ գոյություն ունեն 10 առևտրի և սպասարկման օբյեկտներ, փողոցի երկայնքով առկա են շուրջ 24 առանձնատներ: Փողոցի սկզբնամասին հարող տարածքը ունի փոքր կենտրոնի համարում: Ասֆալտբետոնյա ծածկը տարիների ընթացքում գրեթե վերացել է և առաջանում է երթևեկության անհարմարավետություն հատկապես աշնանը և ձմռանը: Նշված փողոցը վերջին 30 տարիների ընթացքում չի վերանորոգվել: Փողոցի որոշ հատվածներում առաջացել են փոսեր, որոնք լուրջ խոչընդոտներ են առաջացնում գիշերային ժամերին հետիոտների և ավտոտրանսպորտի երթևեկի համար, որը նպաստում է նաև ավտոտրանսպորտային միջոցների ժամանակից շուտ շարքից դուրս գալուն:

Քաղաքի ամենաբանուկ փողոցներից է նաև Մայիսյան փողոցը, որը հատվում է Շահումյան փողոցի հետ (երկ.232մ): Անմխիթար /գրեթե անանցանելի / վիճակում է գտնվում հատկապես կենտրոնական Շահումյան փողոցից տեսանելի հատվածը՝ 70մ: Այդ փողոցի վրա գոյություն ունեն 14 առանձնատներ: Այն հանդիսանում է նաև Շահումյան փողոցի բժշկական կենտրոնին հարող հատվածը շրջանցող փողոց:

Վայք համայնքի Հերիեր բնակավայրի 1-ին փողոցը համարվում է առաջնային փողոց: Ամենաբանուկ փողոցներից է: Փողոցը վերջին 20 տարիների ընթացքում չի վերանորոգվել: Գտնվում է վատթար վիճակում: Ծրագրի իրականացումը համայնքի կարևորագույն խնդիրներից է: Բնակչության շրջանում է առաջանում է դժգոհություններ վատ ճանապարհների հետ կապված:

Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է 97,0 մլն ՀՀ դրամ, որից համայնքային բյուջեից ակնկալվում է ներդրել մոտ 53,0 մլն. դրամ, սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում՝ 44,0 մլն. դրամ: Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2022թ. ընթացքում:

<< ՀՀ Վայոց ձոր մարզի Վայք համայնքի Զառիթափ մանկապարտեզ >> ՀՈԱԿ-ի առաջին մասնաշենքի հիմնանորոգում»

Զառիթափի մանկապարտեզ ՀՈԱԿ-ը Վայք համայնքում միակ մանկապարտեզն է, որը սպասարկում է համայնքի 6 բնակավայրերի երեխաներին: Համայնքի բնակավայրերից 4 սահմանապահ են ,իսկ 2-ը բարձր լեռնային: Մանկապարտեզի մի մասնաշենքը կապիտալ վերանորոգվել է մինչև 2016 թվականի խոշորացումը: Նախատեսված է եղել 40-50 երեխաի համար: Խոշորացումից հետո Զառիթափի համայնքապետարանը հոգացել է համայնքի 6 բնակավայրերից երեխաների անվտանգ տեղափոխումը Զառիթափի մանկապարտեզ: Մանկապարտեզ են հաճախում 90-ից 100 երեխա /3 խումբ/: Ներկա պահին տեղերի քանակը սահմանափակ է, քանի որ վերանորոգված մասնաշենքը չի բավականացնում վերը նշված քանակին, իսկ մանկապարտեզ հաճախել ցանկացող երեխաների քանակը ավելանում է: Ստիպված երեխաների մի խմբին հատկացրել են չվերանորոգված մասնաշենքը, որը գտնվում է ոչ բարվոք և անմխիթար վիճակում: Համայնքում կարևորագույն խնդիրներից է վերանորոգել այդ մասնաշենքը: Համայնքը չունի բավարար միջոցներ վերանորոգելու համար: Մասնաշենքը կառուցովել է 1986-1976 թվականներին և մինչ օրս չի վերանորոգվել: Մանրահատակը քանդված է, պատուհաններն անորակ են: Տվյալ մասնաշենքը ունի նաև ջեռուցման խնդիր: Այժմ ջեռուցումը կատարվում է էլեկտրական եղանակով, ինչը նաև անվտանգության տեսակետից նպատակահարմար չէ: Մասնաշենքը չի համապատասխանում ժամանակակից ստանդարտներին:

Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է 57,84 մլն ՀՀ դրամ, որից համայնքային բյուջեից ակնկալվում է ներդնել մոտ 17,1 մլն. դրամ, սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում՝ 40,0 մլն. դրամ: Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2022-2023թթ. ընթացքում:

ԾՐԱԳԻՐ 5

Վայք համայնքի Վայք քաղաքի Վ. Համբարձումյան փողոցի, Ջերմուկի խճուղու, Փոռ բնակավայրիներին ցանցի և Սարավան Սարալանջ սնող գազատարի կառուցում

Վայք համայնքը հիմնականում գազաֆիկացված քաղաք է: Գազաֆիկացված չէ Վ.Համբարձումյանի անվան փողոցի 320 ԳԾ/մ հատվածը: Գազաֆիկացման արդյունքում քաղաքի այդ թաղամասի տնտեսությունները ևս կկարողանան օգտվել բնական գազից: Ներքին ցանցի կառուցումը համայնքի կարևոր հիմնահարցերից է, քանի որ բնակչության շրջանում առաջանում է դժգոհություններ:

Համայնքի Սարավան բնակավայրում առկա է կառուցված գազատարի հին գիծ՝ 3000 ԳԾ/մ, որի շահագործումը հնարավոր չէ տեխնիկական պայմանների թերի լինելու պատճառով: Այժմ առաջանում է բնակչության մոտ դժգոհություններ, քանի որ բնակավայրի բնակչությունը՝ շուրջ 120 տնտեսություն չեն կարողանում օգտվել բնական գազից, իսկ բնակավայրի մնացած հատվածներում առկա չէ գազատարի ցանց: Նախատեսվում է Սարավանից մինչև Սալարանջ կառուցել 3000 ԳԾ/մ գազատարի ներքին ցանց, որի արդյունքում բնակավայրի բոլոր տնտեսությունները հնարավորություն կունենան օգտվել բնական գազից: Արդյունքում բնակավայրը ամբողջությամբ կգազաֆիկացվի:

Համայնքի Փոռ բնակավայրում առկա է գազաֆիկացման համակարգ, որը կառուցվել է դեռ 2013 թվականներին: Բնակավայրի 60 տոկոսը գազաֆիկացված է, որից օգտվում են 45 տնտեսություններ, իսկ մնացած բնակչության մոտ առաջանում է դժգոհություններ, քանի որ չեն կարողանում օգտվել բնական գազից: Ծրագիրը համայնքի հիմնահարցերից է:

Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է 60,149 մլն ՀՀ դրամ, որից համայնքային բյուջեից ակնկալվում է ներդնել մոտ 27,0 մլն. դրամ, սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում՝ 33,0 մլն. դրամ: Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2022-2023թթ. ընթացքում:

ԾՐԱԳԻՐ 6

«Վայք համայնքի Վայք քաղաքի Շահումյան և Իսրայել Օրու փողոցների ասֆալտապատում»:

Վայք համայնքի Վայք քաղաքի Շահումյան փողոցը վերանորոգվել է 1980 –ից 1985 թվականներին: Տարիների ընթացքում ամբողջությամբ քանդվել է: Զրահեռացման համակարգի անցկացման պատճառով փողոցի ասֆալտի ծածկույթը վնասվել է: Այժմ գտնվում է վատթար և անբարվոք վիճակում: Շահումյան փողոցը համարվում է Վայք քաղաքի գլխավոր փողոցը: Բնակչության շրջանում առաջանում է դժգոհություններ: Այժմ անհրաժեշտ է վերակառուցել 2000մ հատվածը: Վայք համայնքի Իսրայել Օրի փողոցը համարվում է առաջնային փողոց: Ամենաբանուկ փողոցներից է: Փողոցը վերջին 20-25 տարիների ընթացքում չի վերանորոգվել: Գտնվում է վատթար վիճակում: Վերը նշված ծրագրերի իրականացումը համայնքի կարևորագույն խնդիրներից է: Բնակչության շրջանում առաջանում է դժգոհություններ վատ ճանապարհների հետ կապված: Շահումյան փողոցը Վայք քաղաքի ամենաբանուկ փողոցներից մեկն է, որին միանում են Վայք քաղաքի բոլոր փողոցները: Ասֆալտբետոնյա ծածկը տարիների ընթացքում գրեթե վերացել է և առաջանում է երթևեկության

անհարմարավետություն հատկապես աշնանը և ձմռանը: Նշված փողոցը վերջին 25 տարիների ընթացքում չի վերանորոգվել: Փողոցի որոշ հատվածներում առաջացել են փոսեր, որոնք լուրջ խոչընդոտ են առաջացնում գիշերային ժամերին հետիոտների և ավտոտրանսպորտի երթևեկության համար, որը նպաստում է նաև ավտոմեքենանրի ժամանակից շուտ շարքից դուր գալուն:

Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է 430,0 մլն ՀՀ դրամ, որից համայնքային բյուջեից ակնկալվում է ներդնել մոտ 236,0 մլն. դրամ, սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում՝ 194,0 մլն. դրամ: Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2022-2023թթ. ընթացքում:

ԾՐԱԳԻՐ 7

Վայք համայնքի համայնքապետարանի վարչական շենքի վերանորոգում և Վայք քաղաքայի զբոսայգում Արցախյան պատերազմներում զոհված հերոսների հիշատակը հավերժացնող հուշարձան-համալիրի կառուցում:

Վայք համայնքը խոշորացված համայնք է, որն իր մեջ ներառում է 15 բնակավայր և 1 քաղաք: Խոշորացումից հետո աշխատակիցները կենտրոնացել են Վայք քաղաքի վարչական շենքում: Վարչական շենքը կառուցվել է 1960 թվականին և մինչ օրս չի վերանորոգվել: Այժմ խնդիր է առաջանում աշխատակիցների հարմարավետ աշխատանքը կազմակերպելու համար: Վարչական շենքում աշխատում են շուրջ 48 աշխատակից: Նրանց աշխատանքի որակը բարձրացնելու համար անհրաժեշտ է հարմարավետություն, որն էլ իրենից ենթադրում է վարչական շենքի վերանորոգում-հիմնանորոգում: Ծրագիրը առաջնային է նաև համայնքի բնակիչների ընդունելության համար, քանի որ համայնքապետարանը սպասարկում է համայնքի բոլոր բնակավայրերի բնակիչներին: Բնակիչների ընդունելությունը ներկա պահին իրականացվում է ոչ պատշաճ մակարդակով: Ամեն օր այցելում է համայնքապետարան 25 -30 բնակիչ: Շենքը երկհարկանի է :

Վայք համայնքը մշակույթային առումով զարգացող քաղաք է: Ծրագրի արդյունքում Վայք համայնքի, Վայք քաղաքի զբոսայգում նախատեսվել է կառուցել Արցախյան պատերազմներում զոհված հերոսների հուշահամալիր:

Վայք համայնքը Արցախյան 3 պատերազմներում ունեցել է 100 -ավոր զոհեր: Հայրենիքին իրենց կյանքը նվիրաբերած հերոսների հիշատակին նվիրված հուշահամալիրի կառուցումը նրանց հիշատակը հավերժացնելու համար է:


Համայնքապետարանի հիմնանորոգման իրականացման համար անհրաժեշտ է 37,0 մլն ՀՀ դրամ, որից համայնքային բյուջեից ակնկալվում է ներդնել մոտ 20,3 մլն. դրամ, սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում՝ 16,65 մլն. դրամ: Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2022-2023թթ. ընթացքում:

9. ՀԶԾ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ

Համայնքի զարգացման ծրագրում նախատեսված ծրագրերը և այլ աշխատանքներ ուղղված համայնքի զարգացմանը կիրականացվեն օգտագործելով համայնքի սեփական եկամուտները, ՀՀ Կառավարության պետական աջակցությունը, միջազգային և դոնոր կազմակերպությունների, ինչպես նաև անհատ ներդրողների աջակցությամբ: Նշված ներդրումները և աջակցությունը ստանալու համար այժմ տարվում են աշխատանքներ:

Մասնավորապես ՀԶԾ-ում նշված մի քանի ծրագրերը նախատեսվում է իրականացնել ՀՀ Կառավարության /սուբվենցիոն ծրագրեր /և անհատ ներդրողների աջակցությամբ: Ծրագրերի մի մասը կիրականացվեն համայնքի սեփական եկամուտների հաշվին:

Ստորև ներկայացվում է 2022-2026 թվականների ընթացքում վերոնշյալ ծրագրերի աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ ֆինանսավորման աղբյուրները և դրանց չափերը:



Վերոնշյալ ծրագրերի բյուջեները հաշվարկված են նախնական գնահատմամբ, նախատեսվում է այդ ծրագրերը իրականացնել համաներդրմամբ՝ ներիժգրավելով համայնքի սեփական եկամուտները, ՀՀ Պետական աջակցությունը, ինչպես նաև միջազգային և դոնոր կազմակերպությունների, անհատ ներդրողների աջակցությունը:

10. ՀՁԾ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ

Համայնքի ՀՁԾ ծրագրով ներառված զարգացման ծրագրերը և աշխատանքները կարևոր են համայնքի զարգացման գործում, որոնք միտված են գլխավորապես համայնքի բնակչության կենսամակարդակի և ապրուստի պայմանների բարելավմանը, այդ իսկ պատճառով ՀՁԾ-ի մոնիթորինգը շատ կարևոր:

Նախատեսվում է մոնիթորինգ իրականացնել 5 տարիների ընթացքում վերը նշված բոլոր ծրագրերի իրականացման ժամանակ, ինչպես նաև իրականացնել մոնիթորինգ յուրաքանչյուր ծրագրի ավարտից հետո հասկանալու ստացված օգուտները և հետագայում նմանատիպ ծրագրերի իրականացման ընթացքում կատարվելիք բարեփոխումները:

Մասնավորապես մոնիթորինգի կենթարկվեն հետևյալ ցուցանիշները.

- յուրաքանչյուր ծրագրի բյուջեն, դրա ֆինանսավորման աղբյուրները,
- ծրագրի օգուտները և արդյունքները,
- ներգրավված բնակիչների թիվը,

Կատարված մոնիթորինգի արդյունքները կամփոփվեն և կներկայացվեն համայնքի բնակչության ուշադրությանը տարին մեկ անգամ՝ հրավիրելով համայնքի ընդհանուր ժողով: Այն կօգնի ապահովել ՏԻՄ աշխատանքների թափանցիկություն, ինչպես նաև յուրօրինակ հարթակ կհանդիսանա լսելու համայնքի բնակիչների առաջարկությունները և կարծիքները: